25 SEP 2010

656.8
Խ-11

ԻՍԿԱԿԱՆԻ ՎՐԱ ԳՐՎԱԾ Է «ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ» 21/8-29 Թ.
ԽՍՀՄ. ՓՇԺԿ-Ի ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԼԻԱԶՈՐ՝ Կ. ՎԱՆՏԱԼԻԱՆԻ

ՀՐԱՀԱՆԳ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՓՈՍՏԱՅԻՆ ԼԻԱԶՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Գյուղական փոստային լիազորների պարտականությունները և նրանց վարձատրությունը

1. Գյուղական փոստային լիազորները նշանակվում են գյուղերում փոստային գործը լավացնելու համար։ Այդ պարտականությունները տանողների թեկնածությունը առաջադրվում է Գյուղխորհրդի կողմից և կամ ընտրվում են գյուղական համայնքից։

2. Գյուղական փոստային լիազորներին հանձնարարվում է.

Ա. Փոստանիշերի և բլանկների վաճառումն.

Բ. Գործակալների և գյուղնամակատարների կողմից չսպասարկված վայրերի հասարակ առաքումների և Պարբերատարակչությունների հանձնումն.

Գ. Պարբերատարակչությունների բաժանորդագրության ընդունումն.

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ
Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆԻ
Անվան
Публичная Библиотека

125277

1.1 SEP 2013

29.499

Դ. Պարբհրատարակչության և գրականության վաճառումն.

Յե. Տեղեկանքների համար պատվերներ ընդունելը և տեղեկանքներ տալը։

ԾԱՆՈԹ.— Հասարակ առաքումների ընդունելությունը կատարվում է փոստարկղի միջոցով։

3. Գյուղական փոստային լիազորը պետք է մասնակցի տեղական Խորհրդային և Հասարակական կազմակերպություններին Փոստային Կապի կազմակերպման աշխատանքներին յենթարկելու, որինակի համար՝ փոստային լիազոր չունեցող կամ փոստային ցանցի մեջ չմտնող գյուղերի հետ փոստի փոխանակման, փոստային ճանապարհների կանոնավորման, տների համարակալման և տնային փոստարկղների հիմնման, փոստային առաքումների հասցեների գրելու և փոստանիշերի փակցնելու կանոնների բացատրության, տարիֆի և տարբական կանոնների ծանոթացման։

4. Գյուղական փոստային լիազորը պետք է հետևի փոստի ժամանակին ընթանալուն, փոստային առաքումների ժամանակին առաքման և հանձնման, գյուղնամակատարների պարտականությունների ճշտորեն կատարելուն և նույնպես պետք է մասնակցի գյուղական փոստային ապարատի թերությունների մասին յեղած գանգատների հետազոտման։

5. Գյուղական լիազորների աշխատանքը վարձատրվում է նրանց կողմից վաճառվելիք փոստանիշերի և բլանկների գնի վրա կատարվելիք հավելման միջոցներով, համաձայն Փոստհեռագրկոմատի 18 փետրվարի 1928 թ. № 23—60 շրջաբերականի։

Բացի դրանից, նրանք ստանում են պարբհրատարակչության և գրականության բաժանորդավճարից և հատավաճառից այն կոմիսիոն վարձատրությունը, որը սահմանված է կոմիսիոն վարձատրության սկզբունքներով աշխատող փոստային գործակալների համար։

6. Գյուղական փոստային լիազորների հետ համաձայնագիր է կնքվում, ըստ որի, նրանք համաձայնվում են կատարելու լիազորի պարտականությունները՝ համաձայն հրահանգում ցույց տրված պայմանների և պատասխանատվություն են կրում նրանց հանձնված գույքի, արժույթների և փոստի համար, ըստ որում, մինչև համաձայնագիր կնքելը, Կապի բաժանմունքները կամ գործակալությունները նախապես անհրաժեշտ հրահանգներ են տալիս գյուղական փոստի լիազորի թեկնածուին։

7. Գյուղական փոստի լիազորը, պաշտոնական կարգով յենթարկվելով այն փոստային հիմնարկության վարիչին, որի հետ համաձայնագիր է կնքել, միաժամանակ պարտավոր է հաշվետվություն տալ այն գյուղական կազմակերպության, որը նրան ընտրել է։

2. Փոստային առաքումների ընդունելությունը, հանձնելը յեվ հասցնելը

8. Գյուղական փոստային լիազորը հասարակ առաքումների ընդունելությունը կատարում է փոստարկղի միջոցով, որը կախված պետք է լինի նրա ապրած տան մոտ։ Նա փոստարկղը բաց է անում նախ

25 SEP 2010

քան փոստը փոխանակելու գնալը։ Փոստարկղների վրա պետք է գրված լինի թղթակցությունների դատարկման և ուղարկման ժամկետը։

9. Պատվիրված և գնահատված փոստային առաքումները գյուղական լիազորը կարող է ընդունել և հանձնել միմիայն բնակչության տված յերաշխիքով, այսինքն՝ նման առաքումների առաքողները կարող են հանձնարարել լիազորին առաքումները հանձնելու փոստին կամ գյուղնամակատարին և ստանալով փոստային անդորրագիրը հանձնել իրենց, իսկ հասցեատերերը ստանալու նման առաքումները փոստից կամ գյուղնամակատարից՝ ծանուցագրի վրա տված հավատարմագրով։ Փոստային առաքումները ստանալու համար հավատարմագիր տվող անձնավորությունների ստորագրությունները պետք է հաստատվեն գյուղխորհրդի կողմից։

10. Այն տան մոտ, վորտեղ գյուղ-լիազորը մըշտապես ապրում է կամ ծառայության տեղ ունի, պետք է կախված լինի. 1. «Փոստային լիազոր» մակագրությամբ ցուցանակ, 2. հայտարարություններ՝ խոստային ոպերացիայի և փոստի ուղարկման ու հանձման ժամկետների մասին, 3. հասարակ առաքումների տարիֆ, և 4. փոստային ամեն տեսակի առաքումների հասցեների որինակները։

11. Գյուղական փոստային լիազորները, փոստային այն հանգույցից, վորոնց իրենք կցված են, ստանում են № 13 ձևի տետրակներ, վորոնցով փոստը փոխանակման տեղից բաժանելու համար, նրանց տրվում է հասարակ առաքումներ (նամակներ, քարտեր և բանդերոլներ) ինչպես նաև լրագրեր, ժուրնալներ և հեռագրեր. իսկ գնահատված նամակների, ծանրոցների, փոխադրությունների, կրկնավճար նամակների և վերադիր վճարով առաքումների համար տրվում է միմիայն ԾԱՆՈՒՑԱԴՐԵՐ, վորոնց վրա ցույց է տրվում թե հասցեատերը յերբ և վերտեղ պետք է ներկայանա այդ առաքումները ստանալու համար։

12. Գյուղական փոստային լիազորը գյուղում ընդունած թղթակցությունները նշանակված որին և ժամին հասցնում է փոստը փոխանակելու վայրը № 13 ձևի տետրով, վորում՝ փոստային գործակալը (գյուղնամակատարը կամ շարժական փոստի գործակալը) պետք է ստորագրի ընդունած հասարակ թղթակցությունների համար, ցույց տալով ընդհանուր գումարը. իսկ պատվիրված առաքումների, գնահատված նամակների, փոխադրականների, ծանրոցների, հեռագրերի և վերադիր վճարով առաքումների համար, վորոնք ուղարկողները լիազորել են փոստային լիազորին հանձնելու, համաձայն սույն հրահանգի 9-րդ կետի, տալ № 4 ձևի անդորրագրի գրքից յուրաքանչյուր առաքման համար առանձին արդորրագիր։

Գյուղնամակատարը կամ գործակալը, ստանալով փոստային լիազորից թղթակցությունները, յուր հերթին հանձնում է նրան հասարակ առաքումները, լրագրերը, ժուրնալները և հեռագրերը, իսկ պատվիրած, կրկնավճար և ապահովված առաքումների համար ծանուցագրեր՝ լրացնելով սույն հրահանգի 11-րդ կետում ցույց տրված տեղեկություններով։

13. Գյուղական փոստային լիազորը, ստացած № 4 ձևի անդորրագրի գրքի անդորրագիրը հանձնում է այն անձանց, վորոնք վստահացել ելին նրան պատ-

վիրած և ապահովված առաքումների ուղարկումը։

14. Գյուղական փոստային լիազորի սպասարկած գյուղից մինչև փոստի փոխանակման վայրը և ընդհակառակն, փոստի տեղափոխումը կատարվում է շրջգործկոմների և գյուղխորհուրդների միջոցով, համաձայն արդրժողկոմխորհի 1926 թ. ապրիլի 6-ի № 8 վորոշման 2-րդ կետի։

15. Գյուղական փոստային լիազորը պարտավոր է փոստի փոխանակման վայրը ներկայանալ շաբաթական վոչ պակաս 2 անգամից. հիվանդության դեպքում նա պարտավոր է այդ մասին հայտնել փոստային հիմնարկության կամ այն կետին, վորին ամրացրված է և ուղարկել № 13 ձևի տետրը ու ձեռքին ունեցած դրամը։

16. Այն գյուղերում, վորոնք սպասարկվում են գյուղնամակատարների կողմից, փոստային թղթակցությունների և գրականության հանձնումը մտնում է գյուղնամակատարների պարտականությունների մեջ։

Գյուղական լիազորները այդ գյուղերում հանձնում են միայն այն առաքումները, վորոնց հասցեատերերը տանը չգտնվելու պատճառով, գյուղնամակատարի կողմից չեն հանձնված։

Ջ. Փոստային առաքումների ուղարկման վճարը

17. Փոստային առաքումների վճարը կատարվում է փոստանիշերով, վորոնք փակցնվում են առաքումների հասցեն գրված յերեսի աջ անկյունում։

ԾԱՆՈԹ.— Գյուղական լիազորները պետք բացատրեն բնակչության, վոր փոստը փոխանակման կետի և իրենց, փոստ-լիազորների, միջոցով ուղարկվելիք ծանրոցների և փոխադրությունների ծախսերը պետք է վճարել կանխիկ դրամով և վոչ թե փոստանիշերով։

18. Լրիվ կամ բոլորովին փոստանիշ չունեցող նամակները ըստ պատկանելույն ուղարկվում և հանձնվում են անարգել, սակայն հանձնելիս հասցեատիրոջից գանձվում է պատվիրված նամակի ծախսից պակասած գումարը։

19. Կարմիր բանակայիններին և կարմիր նավաստիներին հասցեագրված հասարակ նամակները և բացիկները ուղարկվում են ձրի, յեթե հասցեում ցույց է տրվում կարմիր բանակայինի կամ կարմիր նավաստու ծառայած զինվորական մասը և նրա բանակային կոչումը՝ «Կարմիր բանակային»-ին։

ՆԱՄԱԿԻ, ՓՈՍՏ-ՔԱՐՏԻ ՅԵՎ ՓԱԹԵԹԻ (ԲԱՆԴԵՐՈԼ) ՍԱԿԱԳԻՆ

ՆԱՄԱԿՆԵՐ

20. Տեղականը առաջին 20 գրամին	4 կ.
և հետագա 20 գրամին կամ նրա մասին	2 »
Արտաքաղաքային առաջին 20 գրամին	10 »
» հետագա 20 գր. կամ նրա մասին	5 »

ՓՈՍՏ-ՔԱՐՏԵՐ

Տեղական միտակը	3 կ.
Արտաքաղաքայինը	5 »
Տեղական կրկնակի (պատասխանով)	6 »
Արտաքաղաքայինը պատասխանով	10 »

ՓԱԹԵԹՆԵՐ (ԲԱՆԴԵՐՈՎ)

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐՈՎ

Տեղականը ամեն մի 50 գր. կամ նրա մասին	1 կ.
Արտաքաղաքային » » » » »	2 »

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԹՂԹԵՐՈՎ

Տեղական և արտաքաղաքային ամեն մի 50 գր. կամ նրա մի մասին	2 կ.
Նվազագույն վճար	5 »

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐՈՎ

Տեղական և արտաքաղաքային ամեն մի 50 գր. կամ նրա մի մասին	2 կ.
Նվազագույն վճար	4 »
Շուկայում աննշան արժեք ունեցող փոքր քանակությամբ ապրանքներով փաթեթների համար, բացի նմուշի համար գանձվելիք վճարից, գանձվում է նաև պատվերի համար	10 »

ՊԱՏՎԻՐՎԱԾ ԱՌԱՔՈՒՄՆԵՐ

Ըստ առաքման տեսակի, բացի կշռավճարից և այլ վճարներից, պատվերի համար գանձվում է	10 կ.

ԿՐԿՆԱՎՃԱՐ ԱՌԱՔՈՒՄՆԵՐ

Բոլորովին չվճարված կամ վոչ լրիվ վճարված փոստային առաքումներից, կրկնավճարը գանձվում է մինչև պատվիրած առաքման չափը՝ նայած առաքման տեսակին և քաշին։

ԾԱՆՈԹ.— Փոստանիշ չփակցրված արտաքաղաքային 15 գրամ քաշ ունեցող նամակից, հանձնելու ժամանակ գանձվում է 20 կ. նույն քան քաշ ունեցող մի ուրիշ նամակից, վորի վրա փակցրված է յեղել 5 կ. փոստանիշ, հանձնելու ժամանակ գանձվում է 15 կոպ.։ Արտաքաղաքային բացիկ, վորի վրա փակցրված է յեղել միայն 3 կ. փոստանիշ, հանձնելու ժամանակ գանձվում է 13 կոպ.։

4. Բլանկների յեվ փոստանիշերի ստացման յեվ վաճառման կարգը

21. Գյուղում վաճառելու համար, գյուղական փոստ-լիազորին տրվում է 5 ռուբլուց վոչ ավել գումարով փոստանիշերի կարճատև (յերկու շաբաթից վոչ ավելի) ավանս։

22. Տրված ավանսի համար կապի բաժանմունքի կողմից տրվում է հատուկ վկայական, վորի մեջ ցույց է տրվում ավանսի գումարը։ Իսկ փոստ-լիազորը ստացած ավանսի համար տալիս է ստացական։

Փոստանիշերի և քարտերի ավանսը պետք է լրացվի հետևյալ կարգով.— փոստանիշերի վաճառքից գոյացած գումարով լիազորը ձեռք է բերում նույն քանակով փոստանիշեր՝ փոստային այն բաժանմունքից գործակալությունից կամ ոգակային կետից, վորին նա ամրացրված է։

23. Ավանսով վերցրած փոստանիշերի գումարի համար, գյուղ փոստային լիազորը պատասխանատու է փոստ-հեռագրական վարչության առաջ։

24. Փոստ-լիազորի ապրած տան մոտ պետք է կախված լինի փոստանիշերի վաճառման մասին հետևյալ բովանդակությամբ հայտարարություն.—

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Այսուհետև վաճառվում են փոստանիշեր՝ ինքնաժեքի 10% հավելումով

ՈՐԻՆԱԿ

ՀԱՏԱՎԱՃԱՌԻ ԱՐԺԵՔ

10 կոպ. փոստանիշ—հավելումով	12 կ.
20 » » »	22 »
Տեղական փոստաքարտերի 2 հատը	7 »
Արտաքաղաքային » 2 »	11 »

ԾԱՆՈԹ.— Մի անգամից 50 կոպեկից ավելի փոստանիշ վաճառելու դեպքում 10%-ային հավելումը կատարվում է ճշտությամբ մինչ 1 կոպեկ։

25. Անհրաժեշտ բոլոր տեսակի հայտարարությունները մատակարարվում են փոստ-հեռագրական այն բաժանմունքների կամ գործակալությունների կողմից, որին փոստ-լիազորը կցված է։

5. Պարբերատարակչությունների բաժանորդագրության ընդունելությունը

ԳՅՈՒՂԵՐՈՒՄ

26. Պարբերատարակչությունների տարածման համար, գյուղական փոստ-լիազորը պարտավորվում է ընդունել լրագրերի և ժուրնալների բաժանորդագրություն։

Բաժանորդագրության համար հայտարարված արժեքից փոստ-լիազորը վոչ մի գեղջ կամ հավելում չպետք է անի։

28. Գյուղական փոստ-լիազորը պետք է սպառի բոլոր միջոցները համոզելու բաժանորդին բաժանորդագրվելու յերկար ժամկետով (4—6 ամիս կամ տարեկան) վորովհետև կարճատև (ամսական) բաժանորդագրությունը չափազանց բարդացնում է փոստային ապարատի աշխատանքները և մամուլի հանձման ասպարեզում ընդհատումներ կառաջացնի։

Բաժանորդներին դիմելիս, փոստ-լիազորը պետք է պահպանի քաղաքավարություն։

Փոստ-լիազորները պետք է մատակարարվեն ամենաշատ տարածվող հրատարակությունների ցանկով կամ ցուցակով, վորոնց մեջ պետք է ցույց պրված լինի 1, 2, 3 և 6 ամսվա ու մեկ տարվա բաժնեգինը։

29. Բաժանորդագրությունը ընդունելիս, պետք է պահպանել փոստային հանգույցի սահմանած վորոշ ժամկետը։ այդ ժամկետից հետո բաժանորդագրություն ընդունելիս, լիազորը պետք է զգուշացնի բաժանորդին, վոր նա դուրս գրած լրագիրը կամ ժուրնալը կստանա ուշացումով։

30. Ընդունված բաժանորդագրությունը և դրամը, լիազորը, փոստը փոխանակած որում, պետք է հանձնի փոստային այն հիմնարկության կամ անձին (գործակալին կամ գյուղնամակատարին), վորին նա կցված է։

Լրագրերի և ժուրնալների պատվերի տեղեկությունները, փոստ-լիազորը գրում է № 13 ձևի տետրակում, բաժանորդի խոսքերով։

31. Փոստ-գործակալը կամ գյուղնամակատարը, փոստ-լիազորից լրագրի կամ ժուրնալի պատվերն ու դրամը ընդունելիս, № 4 ձևի անդորրագրի գրքից տալիս է ստացական, վորը փոստ-լիազորը, վերադառ-

նալով գյուղ, իր հերթին հանձնում է բաժանորդագրվողին։

32. № 4 ձևի անդորրագրի գրքից ստացականը (պատճենով) լրացնում է գյուղնամակատարը կամ գործակալը հետևյալ կարգով.

«Առաքման տեսակը» տողում գրվում է հրատարակության անունը։

«Թաղը» տողում—բաժանորդագրության ժամկետը, ցույց տալով առաջին և վերջին ամիսները։

«Արժեքը» տողում—գծվում է։

«Ուր» տողում—բաժնեգրվողի մանրամասն ընակավայրը։

«Գանձված է հասույթ» տողում—բաժանորդավճարը։

33. Լրագրերի կամ ժուրնալների ընդունած բաժնեգրության համար վճատրություն տրվում է բաժանորդավճարի գումարի 5%-ի հաշվով, որը գործակալը կամ գյուղնամակատարը անմիջականորեն տալիս է լիազորին, նրանից լրագրերի և ժուրնալների պատվերը ընդունելու որը, № 4 ձևի անդորրագրի գրքի տալոնի վրա ստորագրել տալով։

34. Նման բաժնեգրությունների տալոնային քարտերը կազմվում են գործակալություններում կամ Փ. Հ. հիմնարկներում, որոնց մոտ հաշվվում է գյուղնամակատարը կամ շարժական փոստի գործակալը և, համաձայն № 4 ձևի արդորր. գրքի, ստացականներով պատճեններում եղած տեղեկությունների։

35. Փոստային լիազորների միջոցով հանձնվելիք պարբերատարակչությունների համար, գործակալի կամ գյուղնամակատարի կողմից կազմվում է ցուցակ

այն քարտից, որով լիազորը ստանում և հանձնում է բաժանորդների հրատարակչությունները։

6. Լրագրերի յեվ ժուրնալների հատավճառ

36. Փոստային լիազորները պարտավոր են իրենց սպասարկած գյուղերում հիմնել լրագրերի և ժուրնալների հատավճառ։

Պարզելով թե ինչպիսի լրագրեր և ժուրնալներ կարող են վաճառվել սպասարկված գյուղերում, լիազորը փոստի փոխանակման կետին (գործակալին կամ գյուղնամակատարին) տալիս է համապատասխան պահանջ։

37. Գործակալը կամ գյուղնամակատարը, ստանալով հանգուցյային կետից պատվիրած լրագրերն ու ժուրնալները հանձնում է փոստ-լիազորին գրանցելով № 13 ձևի տետրում ընդհանուր հաշվով ըստ յուրաքանչյուր առանձին հրատարակչության։

Ո Ր Ի Ն Ա Կ

«Խորհրդային Հայաստան»	3	որինակ
«Մաճկալ»	12	»
«Կրզել-Շաֆագ»	15	» հայն

38. Լրագրերը և ժուրնալները վաճառելով, լիազորը՝ չվաճառվածները, բայց վոչ ավելի քան սահմանված նորմայից, ինչպես նաև ժուրնալների և լրագրերի վաճառքից գոյացած գումարը № 13 ձևի տետրակով վերադարձնում է գործակալին կամ գյուղնամակատարին՝ ստորագրությամբ, դուրս գալով լրագրերի և ժուրնալների վաճառման համար գոյացած գումարի սահմանված տոկոսը (15—20%)։

39. Գյուղնամակատարը կամ գործակալը չվաճառված լրագրեր ու ժուրնալները ինչպես նաև նրանց վաճառքից գոյացած դրամը վերադարձնում է փոստի փոխանակման կետին, որի հետ ամեն անգամ փոստ փոխանակելիս վերջնական հաշիվ է տեսնում։

7. Տեղեկացիների աշխատանք

40. Գյուղական հասարակությանը լրիվ սպասարկելու համար, փոստ-լիազորը պետք է աջակցի գյուղական տնտեսության վարման, հարկերի վճարման, բանակի ծառայության, խորհրդային և հասարակական կազմակերպություններին մասնակցելու և այլն նման խնդիրներին վերաբերող տեղեկանքները փոստի միջոցով ստանալուն։

ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԸ ԲԱԺԱՆՎՈՒՄ ԵՆ 2 ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ

Ա. Բանավորներ, որոնք կարելի չէ տալ փոստ-լիազորին, և

Բ. Գրավորներ, որոնք կարելի չէ տալ խնդրատուին փոստային հանգույցից։

ԲԱՆԱՎՈՐ տեղեկանքներ տրվում են ձրի։

ԳՐԱՎՈՐ տեղեկանքներ տրվում են վճարով։

Այն դեպքում, երբ փոստային լիազորը չի կարող պատասխան տալ, խնդրատուի հարցերը ինքը խնդրատուն կամ լիազորը գրում են տեղեկանքների քարտի վրա և ապա քարտը ուղարկում կամ հանձնվում է գյուղնամակատարին կամ գործակալին այդ տեղեկանքները ստանալու փոստային հանգույցից, որը պարտավոր է քարտը ստանալու հետևյալ փոստով քարտի պատասխանի մասը համապատասխան տեղեկանքով վերադարձնել։

41. Գրավոր տեղեկանքների համար վճարվում են 15 կ. փոստանիշով (տես տարիֆային հավաքածուի 127 էջերս), որը փակցվում է տեղեկանքների քարտի վրա և վրան թանաքով խաչաձև գծվում է։

ԾԱՆՈԹ.— Տեղեկանքների յուրաքանչյուր քարտով թույլատրվում է ստանալ վոչ ավելի քան 3 հարցի տեղեկանքներ։

42. Հանգույցային փոստ-հիմնարկությունը պարտավոր է լիազորին մատակարարել բավականաչափ տեղեկանքների քարտեր։

43. Այն տեղեկանքների վերաբերյալ, որոնց մասին պատասխաններ պետք է տրվեն հանգույցային փոստի սահմաններում, փոստային լիազորը կարող է ընդունել պատվերներ, կառավարական և այլ հիմնարկների հասցեները ստանալու, նրանց ցույց տված սպասարկման ընույթը, զանազան առարկաների գները, բուժ-հիմնարկներում բժշկվող հիվանդի առողջության, բժիշկների ընդունելության ժամանակը և վճարը և այլն։

44. 43-րդ հոդվածում ցույց տրված տեղեկությունները ստանալու համար փոստային լիազորը խնդրատուին տալիս է տեղեկանքների քարտ՝ ձրի։

ԾԱՆՈԹ.— Այդ դեպքում, յուրաքանչյուր քարտով թույլատրվում է ստանալ մեկ հարցի տեղեկանք։

45. Տեղեկանք ստանալ ցանկացողը, քարտի վրա գրում է յուր հարցերը, քանտին փակցնում է 25 կոպեկի փոստանիշ (տես տարիֆային հավաքածուի 127 էջերս) իսկ քարտի պատասխանի մասի վրա (տեղեկանքի քարտ) գրում է յուր ճիշտ հասցեն, որից հետո տալիս է փոստ-լիազորին, այս վերջինը հանձնում է գործակալին կամ գյուղնամակատարին № 13 ձևի տետրակով, որպես բացառություն՝ ստորագրությամբ։

ՀՀ Ազգային գրադարան
NL0305243

24.499

46. Հանգուցյալին փոստում տեղեկանքների պատասխանները գրելով քարտը կտրում են պատասխանի մասից և այս վերջինը պատվիրած ձևով վերադարձնում ուղարկողին ըստ ցույց տրված հասցեի։

Եթե տեղեկանքները պետք է տրվեն հանգուցյալի սահմաններից դուրս, ապա քարտը պատվիրած ձևով ուղարկվում է համապատասխան փոստ-հիմնարկությանն, տեղեկանք տալու և այստեղ հիշված կարգով պատասխանը ուղարկելու համար։

Պատասխան-քարտի վրա, փոստանիշի փոխարեն գրվում է պատասխան տվող հիմնարկության կնիքը։

47. Թեև փոստ-լիազորի հետ անմիջականորեն պատվիրած առաքումների փոխանակում չի սահմանված, սակայն ի նկատի ունենալով գյուղին լրիվ սպասարկելու անհրաժեշտությունը, սահմանվում է տեղեկանքների քարտ-պատասխանի անմիջականորեն փ.-լիազորինհանձնելը, վերջինին ծանուցագրիվրա ստորագրել տալով, քարտ-պատասխանները տեղեկանքների քարտերը տվող անձնավորություններին հանձնելու համար։

ԾԱՆՈԹ.— Տեղեկանքների քարտ-պատասխանները ստանալու մասին ծանուցագրերը փոստ-լիազորի ստորագրությամբ գործակալը կամ գյուղնամակատարը վերադարձնում է փոստային հանգույցին վորպես փաստաթուղթ։

Անդրշրջկապի վարչության փոստային բաժնի վարիչ ՑԱԳԱՐԵՑՇՎԻԼԻ

Խմբագրատու՝ Բ. ՄԵԼԻՔՈՎ

ՀԱՅԳՍԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ

Գրառեպ. № 2739(բ). Պատվեր № 4949. Տիրաժ 1000

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Республиканская Библиотека